

Մարզպետն այցելեց Արագածի եւ Ապարանի տարածաշրջաններ 11.10.2016

Յոկտեմբերի 11-ին մարզպետ Գաբրիել Գյոզալյանն այցելեց Արագածի եւ Ապարանի տարածաշրջաններ: Նա եղավ Նորաշեն, Ալագյազ եւ Վարդենիս համայնքներում: Նորաշեն համայնքում մարզպետը մասնակցեց 1834 թվականին կառուցված Սուրբ Աստղածածին եկեղեցու՝ վերանորոգումից հետո վերաբացման եւ վերածման արարողությանը: Նա հանդիպեց բնակիչներին, լսեց նրանց անհանգստացնող խնդիրները, որոնք հիմնականում սոցիալական ուղղվածություն ունեին: Մարզպետը խոստացավ հնարավորինս աջակցել եւ օգտակար լինել նրանց:

Հաջորդ կանգառը Ալագյազ համայնքում էր ու նա այցելեց դպրոց ուսումնասիրեց հիմնանորոգվող շենքի աշխատանքների ընթացքը: Ի դեպ, ծրագրին իրականացվում է զարգացման ծրագրերի հիմնադրամի կողմից եւ նախատեսված է ավարտել մինչեւ տարեվերջ:

Վարդենիսի համայնքում Գաբրիել Գյոզալյանը ծանոթացավ դպրոցական նոր շենքի կառուցման աշխատանքներին: Այստեղ շինարարական ծրագիրն իրականացվում է պետական բյուջեի միջոցներով՝ քաղաքաշինության նախարարության պատվերով: